ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

(XIX դ. 70-ական թվականներ—XX դ. սկիզբ)

ՊԱՎԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մինչև XIX դ. կեսերն Արևելյան Հայաստանի արդյունաբերության որոշ ճյուղերում աշխատուժի շահագործման տիրապետող ձևը հարկադրական աշխատանքն էր, որն ինչպես կայսրության մյուս շրջաններում, այնպես էլ Անդրկովկասում պետական պարհակ էր համարվում։ Ֆեոդալական հարաբերությունների տիրապետության պայմաններում արդյունաբերական արտադրության կազմակերպման, անմիջական արտադրողների շահագործման այդպիսի ձևը միանգամայն բնական էր։ XIX դ. 50-ական թվականներին պղնձարդյունաբերության մեջ հարկադրական աշխատանքն իր տեղը զիջում է ազատ վարձու աշխատանքի սիստեմին։ Մինչ այդ Ալավերդու և Զանգեզուրի պղնձահանքերի «շրջակա գյուղերի բնակիչները կցված էին ձեռնարկություններին և գործարանների համար աշխատանքային կարգախմբեր էին տրամադրում»[1]։ Հարկադրական աշխատանքը քիչ ավելի երկար պահպանվեց աղահանքերում։ 1864 թ. հունիսի 14-ին կազմված արձանագրության համաձայն Կողբի աղահանքերում հարկադրական աշխատանք են կատարել շուրջ 400 գյուղացիներ, այդ թվում՝ 383 աղահատ, 15 դարբին և 2 հյուսն[2]։

XIX դ. 70—80-ական թվականներից Արևելյան Հայաստանի լեռնարդյունաբերության (մասնավորապես պղնձարդյունաբերության) մեջ տեղի ունեցած դրական տեղաշարժերի հետևանքով ընդարձակվում են վարձու աշխատանքի կիրառման սահմանները։ Վարձու բանվորների թիվը զգալիորեն աճում է նաև մանր արհեստավորական ձեռնարկություններում։ 1893 թ. Երևանի նահանգի 1049 արհեստավորներից 519-ը վարպետներ կամ արհեստանոցի տերեր էին, 530-ը՝ ենթավարպետներ կամ բանվորներ ու աշակերտներ։ 519 վարպետներից 453-ը բանվորներ չունեին, մեկական բանվոր են ունեցել 52-ը, 2-ական՝ 6-ը, 3-ական՝ 1-ը, 4-ական՝ 5-ը, 5-ից ավելի բանվոր են ունեցել 2-ը։ Այսպիսով, 66 վարպետների մոտ վարձու աշխատանք էին կատարում 97 բանվոր։ Առանց աշակերտների են աշխատել 116-ը, 1-ական աշակերտով՝ 293-ը, 2-ական՝ 45-ը, 3-ական՝ 13-ը, 4-ական՝ 1-ը, 5 աշակերտ է ունեցել 1-ը։ 7 վարպետներ ունեցել են 5 և ավելի թվով բանվորներ ու աշակերտներ[3]։

Ինչպես երկրի մյուս շրջաններում, այնպես էլ Արևելյան Հայաստանում արդյունաբերական պրոլետարիատի ձևավորման հիմնական աղբյուրը գյուղացիական բնակչությունն էր։ Զբաղվոր գյուղացիության պրոլետարականացումը պայմանավորված էր կապիտալիստական արտադրական հարաբերությունների հետագա զարգացմամբ և անհրաժեշտ ու պրոգրեսիվ պրոցես էր։ «Ինչպես հողագործությունից դեպի քաղաքները բնակչության շարժումը, այնպես էլ ոչ հողագործական արտադնացությունը,— նշել է Վ. Ի. Լենինը,— առաջադիմական երևույթ է։ Նա կտրում է բնակչությանը հեռավոր, հետամնաց, պետության կողմից մոռացված խուլ անկյուններից և ներգրավում արդի հա-

---

1 *«Հայ ժողովրդի պատմություն», հ. V, Երևան, 1974, էջ 265։*

2 «Протокол Эрпванского губернского статистического комитета от 14 июня 1864 года» *(«Բանբեր Հայաստանի արխիվների», 1968, № 3, էջ 50)։*

3 А. С. Амбарян, К вопросу характеристики промышленности Восточной Армении в конце XIX века *(«Պատմա-բանասիրական հանդես», 1967, № 2—3, էջ 194, 200—201)։*

սարակական կյանքի հորձանուտի մեջ։ Նա բարձրացնում է բնակչության գրագիտությունն ու նրա գիտակցականությունը, պատվաստում է նրան կուլտուրական սովորություններ ու պահանջմունքներ»[4]։ Սակայն Արևելյան Հայաստանի կալվածատիրական, մասամբ էլ պետական գյուղացիության կապիտալիստական դարգացմանը, հետևաբար նաև բանվորական ուժի շուկայի ստեղծմանը հետռեֆորմյան տարիներին զգալիորեն խոչընդոտում էին ֆեոդալական հարաբերությունների մնացուկները։ 1870 թ. մայիսի 14-ի օրենքը չվերացրեց ֆեոդալական հողատիրությունն ու ֆեոդալական պարտությունները, անգամ այնպիսի կարևոր հարց, ինչպիսին հողերի փրկագնումն էր, մնաց չլուծված։ Օրենքով փրկագնումը կատարվելու էր առանց կառավարության օգնության։ Գյուղացիները, ի վիճակի չլինելով փրկագնել հողը, մինչև 1912 թ. մնացին որպես ժամանակավորապես պարտավորյալներ։

1870 թ. մայիսի 14-ի օրենքով կալվածատերերն իրավունք ստացան իրենց ձեռքում պահելու հողի առնվազն 1/3-ը։ Այդ պատճառով գյուղացիները շատ քիչ բաժնեհող ստացան։ Գյուղացիության մի որոշ մասն էլ բաժնեհող չստացավ։ Այդուհանդերձ ռեֆորմն արագացրեց գյուղացիության քայքայումը, մեծացրեց հողազուրկ և սակավահող գյուղացիների թիվը, նպաստեց գյուղի սոցիալական շերտավորման պրոցեսի խորացմանը, արտադրության միջոցներից զուրկ վարձու բանվորների կազմավորմանը։ Այդ պրոցեսներին մեծապես նպաստեց նաև այն հանգամանքը, որ 1870 թ. մայիսի 14-ի կանոնադրությունն օրենսդրական կարգով մուլքադարական գյուղում վերացրեց համայնական հողատիրությունը և հաստատեց ծխական հողօգտագործման սիստեմ[5]։ Դրանցից շահեցին գյուղական ունևորները։ Սակավազոր գյուղացիները, շատ հաճախ չկարողանալով հոգալ տնտեսական ամենատարրական պահանջները, վաճառում էին իրենց փոքրիկ հողաբաժինները և լրացնում վարձու բանվորների բանակը։ Աղքատացած, գոյության միջոցներից զրկված գյուղացիները վարձվում էին իրենց հարուստ համագյուղացիների կողմից, շատ դեպքերում էլ դիմում էին արտագնացության։ Դեռևս XIX դ. 90-ական թվականներից արտագնացությունն ընդունում է մասսայական բնույթ։ Տնտեսական ծանր կարիքը տասնյակ հազարավոր մարդկանց ստիպում էր թողնել հայրենական օջախը և մեկնել քաղաք։ Ունեզրկված գյուղացիներն աշխատանքի էին անցնում Արևելյան Հայաստանի լեռնահանքերում և արդյունաբերության մյուս բնագավառներում։ Ստ. Շահումյանը, վերլուծելով Հայաստանում կապիտալիստական հարաբերությունների զարգացման ընթացքը, 1906 թ. ապրիլի 1-ին «Կայծի» առաջնորդողում գրում էր, որ հայկական գյուղը նույնպես ենթարկված է դրամական տնտեսության և կապիտալիստական արդյունագործական հարաբերությունների ազդեցությանը, որ եթե մինչ այդ գյուղացու կյանքում ամենամեծ ուժը հանդիսացել է հողը, ապա այժմ կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով գյուղացու նկատմամբ անսահման իշխանություն է ձեռք բերել փողը։ «Գյուղական մանր տնտեսությունը քայքայվում է. գյուղացիությունը բնական անհրաժեշտությամբ բաժանվում է երկու մասի... գյուղացիության մեծամասնությունը զրկվում է հողից և արտադրության միջոցներից, ստվարացնում պրոլետարիատի շարքերը և մարդկային նյութ մատակարարում խոշոր կապիտալիստական արդյունագործությանը»[6],— գրում էր նա։

Արևելյան Հայաստանում գյուղացիության քայքայումն ավելի արագ էր տեղի ունենում, քան արդյունաբերության զարգացումը, այդ պատճառով էլ քայքայվող գյուղացիության մի զգալի մասն աշխատանք գտնելու նպատակով հեռանում էր Անդրկովկասի և Ռուսաստանի արդյունաբերական կենտրոնները։ 1897 թ. մարդահամարի տվյալներով, Ռուսաստանի տեքստիլ արդյունաբերու-

---

4 Վ. Ի. Լենին, նույն, հ. 3, էջ 731։

5 Վ. Հ. Ռշտունի, Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության, 1828—1917 թթ., մաս Բ, Երևան, 1968, էջ 60։

6 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 1, Երևան, 1955, էջ 124։

թյան մեջ ազգությամբ հայ վարձու բանվորների թիվը կազմում էր 2,7, անասնապահական մթերքներ մշակող արդյունաբերության մեջ՝ 3,7, մետաղամշակման արդյունաբերության մեջ՝ 5,6 հազար[7]։ Հայ բանվորների թիվը մեծ էր հատկապես Վրաստանում և Ադրբեջանում։ XIX դ. վերջին և XX դ. սկզբին Վրաստանում հայերը կազմում էին պրոլետարիատի առնվազն 35%-ը[8]։ Իսկ Ադրբեջանում (մասնավորապես Բաքվի նավթարդյունաբերական ձեռնարկություններում) 1900 թ. նրանք կազմում էին բանվորների 25,3%-ը[9]։ Երբեմն էլ գյուղության միջոցներից զրկված գյուղացիները ստիպված բռնում էին հեռավոր երկրներում աշխատանք գտնելու ճանապարհը։ Միայն 1913 թ. արտասահմանյան երկրներում աշխատանք գտնելու նպատակով Երևանի նահանգից հեռացել է մոտ 2137 մարդ[10]։ Հատկանշական է, որ հայ արտագնացների թիվը գնալով մեծանում էր։ Եթե, օրինակ, 1898 թ. Երևանի նահանգից արտագնացության է դիմել մոտ 20 հազար[11], ապա 1913 թ.՝ 48742 մարդ[12]։ Արտագնացության մասին ավելի հանգամանորեն կարելի է դատել 1913 թ. վերաբերող հետևյալ աղյուսակից[13]։

Գավառներ	Այն գյուղերի թիվը, որտեղից բնակիչները դիմել են արտագնացության	Վաստակ գտնելու համար արտագնացության մեկնողների քանակը		
		նահանգի սահմաններում	նահանգի սահմանից դուրս	արտասահման
Երևանի	84	1912	594	82
Էջմիածնի	120	5502	2332	26
Սուրմալուի	152	936	845	122
Նոր Բայազետի	131	3619	9308	171
Ալեքսանդրապոլի	154	3121	9331	1548
Շարուր-Դարալագյազի	100	543	1863	1
Նախիջևանի	120	1813	4886	187
ընդամենը	861	17446	29159	2137

Աղյուսակից երևում է, որ 1913 թ. նահանգի 861 գյուղերից արտագնացության ճանապարհն է բռնել 48742 մարդ։ Հատկանշական է, որ նրանցից 17446-ը աշխատանք էր փնտրում նահանգի ներսում։ Աղյուսակի տվյալները միաժամանակ ցույց են տալիս, որ աղքատացած բնակչության մի զգալի մասը, աշխատանք չգտնելով նահանգում, ստիպված բախտ էր որոնում անգամ օտար երկնակամարի տակ։ Այսպիսով, ընդամենը 15 տարվա ընթացքում նահանգում ապրանքագրամական հարաբերությունների վերելքի, կապիտալիստական արդյունաբերության զարգացման, սոցիալական շերտավորման խորացման հետևանքով արտագնացությունն աճում է շուրջ 2,5 անգամ։

XX դ. սկզբին Արևելյան Հայաստանում երևան չեկան արդյունաբերական այնպիսի խոշոր օջախներ, որոնք կարողանային կենտրոնացնել առևտրաար-

7 «Общий свод по нмперии результатов разработки данных первой всеобщей переписи населения, произведенной 28 января 1897 г.», т. 11, СПб., 1905, табл. XXI и XXII.

8 Э. В. Хоштария, Очерки социально-экономической истории Грузии, Тбилиси, 1974, с. 195.

9 И. В. Стригунов, Из истории формирования бакинского пролетариата (70—90 гг. XIX века), Баку, 1960, с. 144—145.

10 Центральный государственный исторический архив ГрузССР (далее ЦГИА ГрузССР), ф. 13, оп. 15, д. 1416, л. 7 и об.

11 Ц. П. Агаян, К вопросу о формировании рабочего класса в Закавказье («Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 3, էջ 65)։

12 ЦГИА ГрузССР, ф. 13, оп. 15., д. 1416, л. 7. и об.

13 Նույն աղբյուր, տե՛ս նաև „Обзор Эриванской губернии за 1912 г.", с. 14, за 1913 г., с. 16.

դյունաբերական բնակչության գերակշռող մասը։ Դա մասամբ պետք է բացատրել նրանով, որ Արևելյան Հայաստանի արդյունաբերությունը հիմնականում զարգացավ ոչ թե քաղաքներում, այլ գերազանցապես գյուղական վայրերում։ Այդպիսի գյուղեր կամ ավաններ էին Ղաթարը, Ալավերդին, Ախթալան և այլն։ Անշուշտ, ինչպես մյուս ծայրամասերի, այնպես էլ Արևելյան Հայաստանի քաղաքային կյանքի թույլ զարգացումը հետևանք էր նախ և առաջ կապիտալիստական հարաբերությունների անհամաչափ զարգացման, ինչպես և ցարիզմի քաղաքականության։ Ցարիզմը աշխատում էր ծայրամասերն օգտագործել միայն որպես հումքի աղբյուր և կենտրոնական Ռուսաստանում արտադրված արդյունաբերական ապրանքների վաճառման շուկա։

Այսպիսով, Արևելյան Հայաստանի արդյունաբերական պրոլետարիատի աճի գլխավոր աղբյուրը գյուղական հողագործական բնակչությունն էր։ Բացի այդ, երկրամասի բանվոր դասակարգի ձևավորումն ինչ-որ չափով տեղի էր ունենում նաև քաղաքային և գյուղական արհեստավորների հաշվին, որոնք, չդիմանալով կենտրոնական Ռուսաստանից և Անդրկովկասի արդյունաբերական խոշոր կենտրոններից ստացվող մեքենայական արտադրանքի մրցակցությանը, աստիճանաբար քայքայվում և դառնում էին վարձու բանվորներ։ Երկրամասի բանվոր դասակարգը համալրվում էր նաև բանվորական ընտանիքի հաշվին՝ ժառանգաբար հորը փոխարինում էր որդին։ Վերջապես, Արևելյան Հայաստանի արդյունաբերական պրոլետարիատի մի զգալի մասը կազմում էին օտարահպատակները, մասնավորապես պարսկահպատակները։

1897 թ. հունվարի 28-ի մարդահամարի տվյալներով միայն Երևանի նահանգում արդյունահանող, վերամշակող արդյունաբերության և շինարարության մեջ զբաղված էր 3307, տրանսպորտում՝ 665, գյուղատնտեսության մեջ՝ 8152 մարդ։ Օրավարձու և սեզոնային բանվորների թիվը հասնում էր 5064-ի։ Առևտրի մեջ զբաղված էր 403 բանվոր, և որպես սպասավորներ ֆաբրիկաներում, գործարաններում և տներում աշխատում էին 3192 բանվորներ։ Նահանգում բանվորների թիվը ընդամենը 20783 էր[14]։ Եթե նկատի ունենանք, որ վիճակագրական այդ տվյալների մեջ չէին մտնում Արևելյան Հայաստանի արդյունաբերական երկու խոշոր շրջանները՝ Ալավերդին և Զանգեզուրը, որտեղ դարավերջին աշխատում էր շուրջ 5000 բանվոր[15], ապա կարելի է ասել, որ արդյունահանող և վերամշակող արդյունաբերության մեջ (այդ թվում արդյունագործական մանր ձեռնարկություններում) 1897 թ. զբաղված էր 8000—8500 բանվոր։

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին Ալավերդում և Ղափանում աշխատող բանվորների թիվը մոտավոր հաշվումներով 4—5 հազար էր։ Սակայն մինչև այժմ, որքան մեզ հայտնի է, պատմատնտեսագիտական դրականության մեջ ստույգ տեղեկություններ չկան ռուսական առաջին հեղափոխությունից հետո Հայաստանի արդյունաբերական առանձին ձեռնարկություններում աշխատող բանվորների թվի, նրանց աշխատանքային օրվա տևողության ու աշխատավարձի մասին։ Այդ առումով հետաքրքրական են Ալավերդու բանվորներին վերաբերող տվյալները[16], որոնցից ամենահները վերաբերում են 1909 թ.։ Այդ թվականին Ալավերդու պղնձարդյունաբերական ձեռնարկություններում աշխատող բանվորների և ծառայողների տեղաբաշխումն ուներ հետևյալ պատկերը. հանքարդյունաբերական վարչությունում և գրասենյակում հիշատակվում է 9 բանվոր, հանքերում՝ 899, գործարաններում՝ 449-ը։ Բեռների փոխադրումների և զանազան սարքավորումների վրա աշխատում էր 125 բանվոր, ինչպես նաև 188 ենթավարպետ ու 32 ծառայող։ Այսպիսով, բանվոր-

---

14 М. Я. Кантере, Из истории рабочего класса Грузии, Тбилиси, 1970, с. 12.

15 Վ. Ա. Ավետիսյան, Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, Երևան, 1976, էջ 52։

16 ՀՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՊԿՊԱ), ֆ. 195, ց. 1, գ. 196, թ. 2։

ծառայողների ընդհանուր քանակը հասնում էր 1702 մարդու[17], որից 1432-ը կազմում էր մշտական աշխատանք կատարող հանքափոր և պղնձադործ բանվորությունը։ Համանման վիճակագրական տեղեկություններից երևում է, որ 1910 թ. Ալավերդում մշտական և ժամանակավոր բանվորների թիվը եղել է 1655 մարդ։ Մեկ այլ տեղեկության համաձայն 1912 թ. Ալավերդում աշխատող բանվորների և ծառայողների թիվը հասել է 1945-ի[18]։ Շամլուղի հանքերում 1912 թ. աշխատել է 951 մարդ։ 1913 թ. տվյալների համաձայն Շահալի-Էլիարի և Ախթալայի հանքերում և գործարաններում բանվոր-ծառայողների թիվը հասնում էր 600-ի[19], այսպիսով ընդամենը 3496 բանվոր։

Այդ նույն տարիներին Ալավերդու, ինչպես նաև Շամլուղի (ֆրանսապատկան) հանքերում ու գործարաններում աշխատել է մոտ 2000 բանվոր և ծառայող[20]։ Արխիվային աղբյուրներից մեկի համաձայն 1910 թ. Ղափանի հանքերում աշխատող բանվորների թիվը հասել է շուրջ 2500-ի, որոնց մեծ մասը տեղացի քայքայված գյուղացիներ էին[21]։ Որոշ թվով բանվորներ էին աշխատում վերամշակող արդյունաբերական ձեռնարկություններում։ Վիճակագրական տվյալները հնարավորություն են տալիս ենթադրելու, որ դրանցում զբաղված վարձու բանվորների թիվը մեծ չի եղել։ 1912 թ. Երևանի նահանգի արդյունաբերական մասնր ձեռնարկություններում աշխատում էր 9261 դործավոր[22]։ Բանվորների այդ թվի մեջ էին մտնում նաև ջրաղացներում, ձիթհանքերում, ներկատներում, բրուտագործական արհեստանոցներում աշխատողները, որոնց մի մասը դեռևս արտադրության միջոցների սեփականատեր արհեստավորներ էին։ Նույն թվականին միայն Ալեքսանդրապոլի գավառում աշխատում էր 230, իսկ Կարս քաղաքում՝ 68 բանվոր[23]։

1912 թ. Երևանի նահանգի բամբակաղտիչ ձեռնարկություններում աշխատում էր 1069, բրնձի մաքրման ձեռնարկություններում՝ 171 բանվոր։ Բամբակաղտիչ դործարաններում աշխատում էր 18, իսկ բրնձի մաքրման ձեռնարկություններում՝ 50 բանվոր[24]։ Այսպիսով, 1912 թ. Երևանի նահանգի բամբակաղտիչ և բրնձի մաքրման ձեռնարկություններում աշխատում էր 1308 բանվոր։

Բավականաչափ բանվորներ էին աշխատում Թիֆլիս—Ալեքսանդրապոլ—Կարս—Երևան երկաթգծի շինարարության վրա, որոնց մի մասը մշտական բնակություն էր հաստատում աշխատանքի նոր վայրերում, իսկ մյուս մասը՝ իր կապերը չկտրելով գյուղատնտեսությունից, կատարում էր ժամանակավոր, սեզոնային վարձու աշխատանք։ «Մշակ» թերթի հաղորդած տվյալների համաձայն 1896 թ. Թիֆլիս—Կարս երկաթուղու շինարարության վրա զբաղված էր շուրջ 10 հազար բանվոր[25]։ Վ. Ավետիսյանի կարծիքով բանվորների թիվը չափազանցված է, բայց տալիս է մոտավոր պատկերացում[26]։ 1900 թ. միայն Ալեքսանդրապոլ—Երևան երկաթգծի կառուցման չորս տեղամասերից մեկում վարձու բանվորների թիվը կազմում էր 1203 մարդ[27]։ Շինարարության ավար-

---

17 Նույն տեղում։

18 Նույն տեղում, թ. 5, 9, 11, 13, 15, 17, 19, 21, 24։

19 Նույն տեղում, գ. 288, թ. 17—23։

20 Նույն տեղում։

21 ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 34, գ. 6, թ. 46—48։

22 «Обзор Эриванской губернии за 1912 год», л. 22.

23 ЦГИА ГрузССР, ф. 415, д. 132, лл. 1, 5, 8 об.

24 Նույն տեղում՝ ֆ. 13, ց. 15, գ. 1371, թ. 20—22։

25 «Մշակ», 1896, № 9։

26 Վ. Ա. Ավետիսյան, նշվ. աշխ., էջ 52։

27 О. С. Баликян, Из истории формирования рабочего класса на строительстве дорог в Восточной Армении (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտություններից», 1975, № 3, էջ 90—91).

տից հետո նրանցից շատերն աշխատանքի էին անցնում երկաթուղային տրանսպորտում։ Կապիտալիստական խոշոր ձեռնարկության բանվորների խմբին պատկանող երկաթուղային բանվորների թվական կազմի վերաբերյալ ստույգ վիճակագրական տվյալներ չունենալու պատճառով հարմար ենք գտնում կատարել մոտավոր հաշվումներ։ Վ. Ի. Լենինը նշում է, որ Ռուսաստանում «երկաթուղային բանվորների թիվը մոտավոր ճշտությամբ կարելի է որոշել, որովհետև ցանցի մեկ վերստին ընկնող երկաթուղային բանվորների թիվն աննշան չափերով է տատանվում։ Ամեն մի վերստին 9-ական բանվոր հաշվելով՝ 1865 թ. երկաթուղային բանվորների թիվը կստանանք 32076 մարդ»[28]։ Այնուհետև ծանոթագրության մեջ Վ. Ի. Լենինը գրում է, որ ամեն մի վերստին 1894 թ. ընկնում էր 10,6, իսկ 1895 թ.՝ 10,9 երկաթուղային բանվոր՝ ավելացնելով, որ այդ թիվն ակնհայտ աճելու միտում ունի[29]։ Եթե նկատի ունենանք, որ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Երևանի նահանգում և Կարսի մարզում կար շուրջ 540 վերստ երկաթգիծ[30], ապա կարելի է ենթադրել, որ այդ ժամանակ երկաթուղային տրանսպորտում զբաղված բանվորների թիվը (այդ թվում օրամշակների և ժամանակավոր բանվորների) 5000-ից պակաս չպետք է լիներ։

Արևելյան Հայաստանի նոր ձևավորվող պրոլետարիատի այս ջոկատն էլ արդյունաբերական և, առաջին հերթին, լեռնարդյունաբերական պրոլետարիատի հետ գլխավորում էր երկրամասի աշխատավորության հեղափոխական պայքարը։

Այսպիսով, առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Արևելյան Հայաստանի արդյունաբերության մեջ և երկաթուղիներում զբաղված բանվորների թիվը մեր հաշվումներով հասնում էր 20257-ի։ Նրանցից 10996-ը կազմում էր երկրամասի արդյունաբերական պրոլետարիատը և երկաթուղային բանվորությունը (Ալավերդու հանքաշխարհում՝ 3496, Զանգեզուրում՝ 2500 և երկաթուղային տրանսպորտում՝ 5000 բանվոր), 9261-ը աշխատում էր մանր արդյունագործական ձեռնարկություններում։ Եթե արդյունաբերական բանվորների այդ թվին ավելացնենք գյուղատնտեսական վարձու բանվորներին, որոնց քանակը 1914 թ. հասնում էր 18000-ի[31], ապա քննվող ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանում վարձու բանվորների թիվը մեր հաշվումներով կազմում էր շուրջ 38000 մարդ։

Արդյունաբերական պրոլետարիատի թվական աճին զուգընթաց տեղի էր ունենում բանվորական ուժի համակենտրոնացում։ Վերջինիս աստիճանը համեմատաբար բարձր էր պղնձարդյունաբերության մեջ։ Հայաստանի պղնձարդյունաբերական գլխավոր ձեռնարկություններից յուրաքանչյուրն ուներ հազարից ավելի բանվոր։ Մոտ երկու տասնյակ այս ձեռնարկություններից ամեն մեկում աշխատում էր 50-ից ավելի բանվոր, իսկ մնացած ձեռնարկություններից յուրաքանչյուրում՝ 8—10[32]։

Բուրժուազիան իր պատմության արշալույսին լայնորեն օգտվել է անչափահասների աշխատանքից։ «Նոր արդյունաբերական սկզբնավորության օրից սկսած,— գրել է Ֆ. Էնգելսը,— երեխաներն աշխատել են գործարաններում, սկզբում, երբ մեքենաները դեռ փոքր էին (հետագայում դրանք խոշորացան), գրեթե բացառապես երեխաներն էին աշխատում գործարանում, ամբողջ խմբերով նրանց վերցնում էին աղքատախնամ տներից և գործարանատերերը վարձում էին նրանց երկար տարիներով, որպես աշակերտներ»[33]։ XX դ. սկզբում Հայաստանի լեռնարդյունաբերական պրոլետարիատի կազմում ևս

---

28 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 3, էջ 630։

29 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 3, էջ 630։

30 Ս. Ս. Բալայան, նշվ. աշխ., էջ 89։

31 Մ. Հ. Ադոնց, Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը 20-րդ դարի սկզբին, Երևան, 1968, էջ 286։

32 Նույն տեղում, էջ 225։

33 Ֆ. Էնգելս, Բանվոր դասակարգի դրությունն Անգլիայում, Երևան, 1934, էջ 246։

զգալի թիվ էին կազմում անչափահասները։ «Կայծ» թերթի 1906 թ. հուլիսի 13-ի համարում տպագրված թղթակցության համաձայն Ալավերդու հանքերում և ձեռնարկություններում աշխատող 2771 բանվորներից 125-ը երեխաներ էին։ Քանի որ պաշտոնական վիճակագրությունը ստույգ տվյալներ չի հաղորդում լեռնարդյունաբերական ձեռնարկություններում անչափահասների աշխատանքի կիրառման սահմանների մասին, դժվար է որոշակիորեն ցույց տալ առանձին ձեռնարկություններում նրանց թիվը։ Այդուհանդերձ արխիվային փաստաթղթերի սուղ տվյալները հաստատում են, որ XX դ. սկզբին Հայաստանի հանքարդյունաբերության մեջ կապիտալիստներն օգտվել էին ոչ միայն դեռահասների (15—17 տարեկան), այլև երեխաների էժան աշխատանքից։ Միայն Ալավերդու հանքաքարի տեսակավորման վրա 1909 թ. աշխատում էին 35 դեռահասներ և 55 երեխաներ։ Հանքերում աշխատում էին 50, օժանդակ աշխատանքներում՝ 5 դեռահասներ[34]։ Հետագա տարիներին լեռնարդյունաբերության մեքենայացմանը զուգահեռ անչափահասների թիվն աճում է։ Դրան մեծ չափով նպաստեց նաև առաջին համաշխարհային պատերազմը։ Ռազմաճակատ մեկնած կադրային բանվորների մի զգալի մասին ինչպես մյուս արդյունաբերական կենտրոններում, այնպես էլ Ալավերդում փոխարինում էին անչափահասները։ 1914 թ. հուլիսին Ալավերդու պղնձահանքերի և գործարանների մշտական բանվորներից 326-ը 15—17 տարեկան էին, 108-ը՝ 12—15 տարեկան։ Նրանք բոլորը միասին կազմում էին մշտական բանվորների 27%-ը[35]։ Դեռահաս, անչափահաս բանվորությունը հիմնականում համալրվում էր հանքարդյունաբերական շրջանի մերձակա հայկական գյուղերի բնակչության հաշվին։

Արևելյան Հայաստանի արդյունաբերական պրոլետարիատի կազմում զգալի թիվ էին կազմում նաև ժամանակավոր և օրավարձու բանվորները։ Նրանց աշխատանքից համեմատաբար շատ էին օգտվում Զանգեզուրի լեռնարդյունաբերական շրջանի կապիտալիստները։ 1912 թ. Զանգեզուրի բանվորների շուրջ 70%-ը կազմում էին ժամանակավոր և օրավարձու բանվորները[36]։ Ժամանակավոր բանվորները զգալի թիվ էին կազմում նաև Ալավերդում։ 1909 թ. Ալավերդու հանքերում և գործարաններում աշխատող 1657 բանվորներից 125-ը ժամանակավոր էին[37]։ Ժամանակավոր բանվորներ էին դառնում ոչ միայն չափահաս տղամարդիկ, այլև կանայք ու երեխաները, ըստ որում ժամանակավոր բանվորական աշխատանքը լայնորեն օգտագործվում էր թե՛ լեռնարդյունաբերության, թե՛ արտադրության մյուս բնագավառներում։ 1897 թ. մարդահամարի տվյալների համաձայն, Երևանի նահանգի 8064 օրավարձու և ժամանակավոր բանվորներից 534-ը կանայք և մինչև 15 տարեկան երեխաներ էին։ Կարսի մարզի 2334 ժամանակավոր և օրավարձու բանվորներից 113-ը կանայք էին[38]։ Ձեռնարկատերերն աշխատում էին ավելացնել ժամանակավոր և օրավարձու բանվորների թիվը, որովհետև մշտական բանվորների համեմատությամբ միևնույն աշխատանքի համար նրանց ավելի քիչ էին վճարում։ Նրանք ժամանակավոր և օրավարձու բանվորների մեջ չէին տեսնում այնպիսի վտանգավոր դասակարգային թշնամիների, ինչպիսին կադրային բանվորներն էին, որոնք գործադուլային պայքարի բովում սոցիալ-դեմոկրատների պրոպագանդիստական-կազմակերպչական աշխատանքի շնորհիվ կոփում էին իրենց դասակարգային գիտակցությունը։ Մինչդեռ ժամանակավոր և օրավարձու բանվորները, բնականաբար, ավելի քիչ էին ենթարկվում հեղափոխական պրոպագանդայի ազդեցությանը և, հետևաբար, ավելի նվազ չա-

---

34 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 195, ց. 1, գ. 196, թ. 3։

35 Մ. Հ. Ադոնց, նշվ. աշխ., էջ 293։

36 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 195, ց. 1, գ. 377, թ. 1։

37 Նույն տեղում, գ. 196, թ. 3։

38 Գ. Ա. Հարությունյան, Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ., Երևան, 1956, էջ 13։

փով էին անհանգստացնում ձեռնարկատերերին։ Երկրամասի լեռնարդյունաբերության մեջ զբաղված, բայց դեռևս հողի հետ կապ պահպանող բանվորներն էլ իրենց դասակարգային գիտակցությամբ ու կազմակերպվածությամբ զգալիորեն տարբերվում էին կադրային բանվորներից։ Այս հանգամանքը բացասաբար էր անդրադառնում պրոլետարիատի հեղափոխական շարժման վրա, քանի որ բանվորների այս խումբը դեռևս պահպանում էր գյուղական հնապանդությունը, բարքերը, սովորությունները։ Հողագործությունից իրենց կապերն ամբողջովին չխզած բանվորները դեռևս հավատ ունեին իշխանությունների նկատմամբ և ավելի հեշտությամբ էին համաձայնվում ձեռնարկատերերի առաջարկած պայմաններին։

Արևելյան Հայաստանում զգալի թիվ էին կազմում մանր ձեռնարկությունների բանվորները, որոնք իրենց կյանքի պայմաններով և դասակարգային գիտակցությամբ որոշակիորեն ետ էին մնում լեռնագործարանային ու երկաթուղային բանվորներից։ Մեքենայական արդյունաբերության զարգացումը պահանջում էր գրագետ, որակյալ բանվորներ։ Սակայն Հայաստանում ֆաբրիկագործարանային արտադրությունը թույլ էր զարգացած։ Այդ պատճառով այստեղ գրագետ բանվորների կարիքն այնքան մեծ չէր, որքան կենտրոնական Ռուսաստանի արդյունաբերական շրջաններում կամ Անգրկովկասի արդյունաբերական այնպիսի քաղաքներում, ինչպիսին Բաքուն և Թիֆլիսն էին։ Դրան պետք է ավելացնել այն, որ ցարական կառավարությունը ինչպես երկրի մյուս շրջաններում, այնպես էլ հատկապես ծայրամասերում չափազանց դանդաղ էր ընդարձակում գպրոցական ցանցը։ Պարզ է, որ բանվորների գրագիտության մասին քիչ բան կարելի է ասել։ Արգելվում էր աղատագրական գաղափարներ արթնացնող գրականությունը և, ընդհակառակը, խրախուսվում էր այն գրքերի տարածումը, որոնցում փառաբանվում էին տիրապետող կարգերը, ինքնակալությունն ու եկեղեցին։

Այդուհանդերձ, XX դ. սկզբին Արևելյան Հայաստանի արդյունաբերության մի շարք ճյուղերում և երկաթուղային տրանսպորտում ձևավորվում էր սոցիալական կազմով միատարր և դասակարգային գիտակցության բարձր մակարդակ ունեցող բանվորների մի ջոկատ, որը հեղափոխական գալիք մարտերում ողջ Ռուսաստանի աշխատավորության հետ միասին բարձր պահեց պրոլետարական պայքարի դրոշը։

О ПРИМЕНЕНИИ НАЕМНОГО ТРУДА В ПРОМЫШЛЕННОСТИ ВОСТОЧНОЙ АРМЕНИИ

(70-ые годы XIX в.—начало XX в.)

ПАВЕЛ АРУТЮНЯН

Резюме

Источником наемной рабочей силы в Восточной Армении, как и в других районах России, являлись разорившиеся слои сельского и городского населения. В канун первой мировой войны число рабочих, занятых в промышленности и на транспорте, достигало здесь, по нашим подсчетам, 20.257 чел. Из них примерно 10.996 рабочих было занято в крупной капиталистической промышленности и на железнодорожном транспорте. Параллельно с количественным ростом пролетариата происходил процесс концентрации рабочей силы, сравнительно высокой в медной промышленности. Следует отметить, что в конце XIX—начале XX вв. в Восточной Армении применялся наряду с мужским и женский труд.